ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ՊՈՂՈՏԱՅԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՂ 20 ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի՝ «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող հենասյուների վրա տեղադրվող 20 գովազդային միջոցների սպառման համակարգերն (այսուհետ՝ Սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Իմիջ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիմող անձ)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն (այսուհետ՝ Ընկերություն) ուղղված 2021 թվականի մարտի 25-ի դիմումը,

բ) որ Սպառման համակարգերը, Դիմող անձի դիմումի համաձայն, միացվում են Ընկերության էլեկտրական ցանցին՝ որպես առանձին սպառման համակարգեր, և լրացուցիչ ծախսեր չեն առաջացնում,

գ) «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մարտի 11-ի №96 և Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի մարտի 12-ի №52/19762 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն Սպառման համակարգերն Ընկերության էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ,

դ) Ընկերության 2021 թվականի ապրիլի 21-ի №04-ԴԳ-02/463 և Դիմող անձի 2021 թվականի ապրիլի 21-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգերը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4 կետով սահմանված կարգով՝ տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մարտի 11-ի №96 և Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի մարտի 12-ի №52/19762 գրությունները:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մայիսի 2021 թ.